

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Օտարապարզացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
այտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ր Մ Է Կ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոպոզիցիայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տեղեկական կարգադրութիւններ. II. Առաջնորդող յօդուածներ. III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԻԿԱՆ ԲԱՍՏԱՆՈՐԳԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կես տարվան 6 ռ. իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ: Հատով համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցեով. Тифлисъ, редакция «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

«Մշակի» տաս տարվայ տարեգարձը.—Ներքին Տեսութիւն: Կանոններ անայլին մասնակցների: Նամակ Գանձակից: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տեսութիւն: Ֆրանսիա: Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Հեռագիրներ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գաւիթ բեկ:

«ՄՇԱԿ» ՏԱՍ ՏԱՐԻ ԱՅ ՏԱՐԵՎԱՐՁԸ

Կարձեալ մի քանի օր և կը լինի յունվարի 1-ը 1882 թւին: Կարձեալ մի քանի

օր և «Մշակը» կը հասնի իր գոյութեան տաս տարվայ տարեգարձին:

Ուղիղ տաս տարի քրանից առաջ, յունվարի 1-ին 1872 թւին հրատարակվեցաւ «Մշակի» առաջին համարը: Առաջին համարի հրատարակման քաղկէն մենք ընդամենը ունեինք 50 բաժանորդ:

Տեսնելով որ գործը անհնարն էր լինի առաջ անելու մենք ստիպեցանք շարունակել նամակներով գիւղէլ որ օգնեն մեզ թերթը տարածելու,—և այն ժամանակ գրեթէ ա-

ԴԱՒԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Ի.

Մի և նոյն գիշերում, երբ Ձեզու բերդը պաշարված էր, երբ մոլանների գլխաւորը մէջտեղ ամբողջ բոլորքով էր մահաբազանների կատաղի վրէժնաբերութեամբ քրիստոնեաների դէմ, երբ Գաւիթ-բեկի մարդիկ բերդի մէջ դանադան գողտնի որդայթներ էին լարում, երբ խանը վեզիրի հետ ուսնեցած աղէտաւոր խորհրդից յետոյ, դիւանատան փառաւոր դաշիճուս նստած, տալիս էր իր աւագանիին իր սարսափելի հրամանը.—մի և նոյն գիշերում, երբ կանանցի բոլոր սենեակների ճրարները հանգած էին, մի սենեակում միայն լոյս էր երևում: Սա մեզ ծանօթ փարիշանի տիկնոջ Չուքէլիյա խանումի սենեակն էր:

Այդ սենեակը, որ մի քանի ժամ առաջ կատարեալ անկարգութեան մէջ էր գտնվում, այժմ ներկայացնում էր կարգ, շքեղութիւն և նրբութեան հասցրած վայելչութիւն: Վարդապոյն թափշով պատած, ոսկեթել փունջերով զարդարած մուփաքանիկը իրանց պատշաճաւոր տերուան էին: Նախապէս դորդերի երեսի վրա սիւսած էին աւելի փափուկ օթնոյնեք թիշմիրի ամենաթանկագին շաւրերը: Մի կողմում պատրաստած էր գեղեցիկ անկողնը, որ բոլորում էր ամենաքնքեղ անուշաոտութիւններով:

Արծաթեայ մատուցարանների վրա դրած էին չինեական հիանալի շէշեր, լցրած զանազան տեսակ շէրեթներով, իսկ նրանց մօտ շարված էին նոյնպէս արծաթեայ մեծ-մեծ գաւաթներ, նկարված գեղեցիկ քանդակներով: Մի կողմում դրած էր թանաքազին զէլանը, որի գլուխը զարդարած էր ֆելտրազարի քարերով: Բուխարու մէջ, մեղմութեամբ վառվող կրակի վրա, եփ էր զալիս անուշահոտ սուբը:

Դէպի որ կողմ և նայում էիր, աչքի էր զարկում շքեղութիւն, փարիշանի, զարդարանք, մինչ միտնից աւելի գեղեցիկ: Իսկ այդ բոլոր վայելչութիւնների մէջ միայն սենեակի թագուհին ներկայացնում էր մի տխուր, դուռնաթափ հակապատկեր: Նա նստած էր մութաքայլի վրա, մեծ հայելու առջև, որ դրած էր ոսկեայ շրջանակի մէջ: Աղբիւնը ինձնով սանտրում էր նրա սև գլխակները և դանազան ձևերով զանազաններ էր տալիս:

—Ես իսկոյն կը պատրաստեմ ձեզ, նազելի տիկին, առում էր աղբիւնը, շարունակելով իր գործը:—Մի վայելցէ՛ք, աշխատեցէ՛ք, որքան կարելի է, ձեր սիրտը ուրախ պահել, դա աւելի մեծ փայլ կը տայ ձեր գեղեցկութեանը: Ձեր դէմքը չափազանց գունաթափ է: Գուք գիտէք, որ խանը չէ սիրում գունաթափի դէմքը: Վնաս չունի, ես դրա ձարը կանեմ. հարկաւոր է միայն ձեր թշնմը փոքր ինչ չիֆի քասնի շարաղով, իսկոյն վարդի գոյն կը ստանան:

—Գասնիկի արտաղ լուս չէ, սաստիկ այրում է, սասց տիկինը հարուշելով:

—Այրում է, ուղիղ է, բայց կարմիր գոյն է տալիս:

—Չգուժելի բան է, կրկնեց տիկինը.—սաստիկ հոտում է:

—Այդ ոչինչ, ես յետոյ կօծեմ ձեր թշնմը վարդի իւղով և արաղի հոտը կը կտրվի:

Տիկինը այլ ևս չը հակառակեց: Աղբիւնը նրա տած էր նրա ետևի կողմում, սանտրում էր մտքով: Նա չուտ-չուտ նայում էր հայելու մէջ տեսնելու տիկնոջ դէմքի արտայայտութիւնը:

—Ուրախ, որքան կարելի է, ուրախ ձեռնարկէ՛ք ձեզ, առում էր նա, թեզվելով դէպի հայելին:—Ապա մի ժպտացէ՛ք, տեսնեմ:

Տիկինը ջանք արաց ժպտալու:

—Այդ ինչ տեսակ ժպիտ է, նկատեց աղբիւնը, ցոյց տալով իր հետոթիւնը:—Գուք երբ որ ժպտում էիք, ձեր ամբողջ դէմքը, կարծես, խոտում էր մի տեսակ հրեշտակային անոյշ բարբառով, որ բովանդակում էր իր մէջ երկնային մոզլիայի ա-

մեն կողմից ստացանք պատասխան, թէ հայոց լրագրութեան անունը այն աստիճան կտորված է, որ հայերը այլ ևս չեն հաւատում որ մի հայոց թերթ կարող է մի օրինաւոր քան լինել: Լրագրի բաժանորդական թերթերը որ մենք ուզարկած էինք այլ և այլ քեղաքներ, մեծ մասամբ մեզ արհամարհանքով վերադարձում էին:

Թիֆլիսում սարող հայ համալսարանականները, բոլորն էլ յարգված և քաղաքում դիրք ունեցող մարդիկ, դիմում էին մեզ հետեւեալ հարցերով. «Ասեցէ՛ք, ինչպէս, ո՞ւր համար էք կամենում հրատարակել հայոց մի թերթ, մի՞թէ կան մարդիկ, որոնք հայերէն գիտենան, կամ պահանջ ունենան հայերէն կարգաւ: Համալսարանականը պետք չունեն ձեր լրագրի մէջ, քանի որ ձեզ ան ից ի՞նչ պետք է սովորեն այն մարդիկ, որոնք իրանք մտաւորապէս զարգացած են, իսկ ամբողջ հայերէն չը գիտեն: Վերջապէս հայ բարձր ուսում ստացածը մի բան կարգաւոր համար պետք չունի հայերէն լեզուով յօդուածներ կարգաւոր, նա այլ և այլ լեզուներ գիտենալով, կարող է և օտար լեզուով կարգաւոր»

Այսին և այնպիսի խնջոց հայ համալսարանականներ, որոնք ուղղակի մեր երեսին ասում էին թէ հայոց կամ վրաց, մի խօսքով տեղական լեզուով լրագրի հրատարակելը կատարեալ յիմարութիւն է: Այսին և այնպիսի

ներ, որոնք մեզ մարգարէանում էին թէ շատ շատ մի վեց ամիս կարող ենք լրագրի հրատարակել իսկ յետոյ, այլ ևս ինքնուրոյն յօդուածների պաշար չունեւոյ, ստիպված կը լինենք լցնել լրագրի էջերը թարգմանութիւններով: այդպիսով լրագրը, ասում էին խնջոց համալսարանականները, կը կորցնի իր հետաքրքրութիւնը մի քանի ամիսից, գուցէ մի քանի շաբաթից յետոյ և ինքն իրան կօչնանայ:

Բայց չը նայելով այդ բոլոր մարգարէութիւնների, արդէլքների, արհամարհանքի, թշնամութեան, նախանձի, ծաղրածութեան, անտարբերութեան, մեր լրագիրը որ յունվարի 1-ին ունեք միայն 50 բաժանորդ, նոյն 1872 թւի վերջը ունեցաւ արդէն մօտ 500 բաժանորդ: Եւ փոխանակ մի քանի ամիս գոյութիւն ունենալու, ահա տաս տարի է որ գոյութիւն ունի:

Վեց տարուց յետոյ ամենօրեայ դառնալով «Մշակը» յանկարծ ստացաւ 900 յետոյ 1000 բաժանորդ և այժմ ամեն տարի մեր բաժանորդների թիւը մի քանի հարիւրով աւելանում է:

Այլ ևս քանի տարի է որ մենք ոչոքին չենք դիմում, ոչոքից չենք խնդրում զրկել մեր լրագրին,—և նա ինքն իր հաստատ ոտները վրա կանգնած, դարձեւ է հայոց հասարակութեան համար մի անհրաժեշտ, կենսական պահանջ:

տարվայ ընթացքում իմ վիճակը եղել է մի սզոյմնելի վարձկան կնոջ դրութիւն, որ իր սերը վաճառում է... Նա կամայակամայ պետք է զուարճացնէ իր այցելուին, որովհետեւ դրա համար վարձված է. նրան վճարում են...

—Փարիշան, առաջ տարաւ նա.—գու որ և իցէ ժամանակ սիրել ես:

—Սիրել եմ, տիկին:

—Ուրեմն կարող ես երեսակայել, թէ որքան ծանր, որքան անախտոր թան է, երբ մարդ ակամայ ստիպված է սիրող ձեռնալ մէկին, երբ նրան սիրել կարող չէ:—Փորձել ես մի այսպիսի բան:

—Փորձել եմ, տիկին...

Աղբիւնը մտաբերեց իր նոյն գիշերվայ ծանր փորձը դուռնաթափների գլխաւոր Աւար ամիտի հետ:

Չուքէլիյա խանումը ազգով յոյն էր, մի լաւ ընտանիքից. նրան խանը գերի բերեց Էրզրումի կողմերից, երբ Եօթն տարի առաջ իր աւագապային խումբերով գնացել էր այն կողմերում ասպատակութիւններ անելու: Նրա հայրը խոտացաւ հինգ հազար ոսկի տալ խանին, միայն թէ իր աղջիկը ազատեւ գերութիւնից, բայց խանը չընդունեց: Գեղեցիկ Չուքէլիյան մնաց նրա կանանցում, բայց ընտ փոխել չը կարողացաւ այն դաստիարակութիւնը, որ ստացել էր իր ծնողների բարեկրթ ընտանիքում: Խանի հարեմը լիքն էր ամեն ազգի, ամեն կրօնի կնիկներով. բայց նրանց և ոչ մէկին անքան անտանելի չէր հարեմական կեանքի սարկութիւնը, որպէս զգայուն, անկեղծ Չուքէլիյային:

—Այդ գեռ ես ներելի է, փարիշան, երբ կինը, զանազան հանգամանքներից ստիպված, պարտաւորվում է իր սերը վաճառել: Բայց անտանելի անցն է, երբ կինը ստիպված է սէր ցոյց տալ, որովհետեւ վայելում է: Ոչ մի տեսակ անտանելի ների մէջ այդ չէ լինում. միայն բռնակալ մարդը կարողանում է այդ անել տալ: Միքեւ ես մի տեսակ հարկատուներ ենք, փարիշան, եթէ չը վճարենք պահանջված հարկը, ծեծելով կնուներ: Բռնակալի

մենաբաղող հնչւածները: Ձեր թշնմը վրա յայտնվում էին երկու գեղեցիկ փորիկներ: Այդ փորիկները տեսնելով, խանը միշտ յիշում էր բանաստեղծի կերպը, որ իր սիրուհու թշնմը երկու փորիկները նմանեցնում է Մուսամմազի դրախտի մէջ գտնված երկու աւազաններին, որոնք բովանդակում են իրանց մէջ անմահութեան ջուրը:

Տիկինը ոչինչ չը պատասխանեց: Յաւայի դառնութեամբ լցված էր նրա սիրտը: Նրա դէմքը ժպտալ չէր կարող: Աղբիւնը շարունակեց

—Իսկ ձեր գեղեցիկ աչքերը, տիկին,—նրեցեցէ՛ք համարձակութեամբ,—սաստիկ հանգած են երեսուսու Ձը գիտեմ ինչու այս գիշեր այսպէս կորցրել են իրանց պաճառ փայլը:

Տիկինը գեղեցիկ աչքերը աւելի նսեմացան. արտասուքը ձեղեղեց նրանց:

—Գու չը գիտես, փարիշան, սասց նա վշտալի ձայնով.—գու չը գիտես, այս գիշեր ես որքան տանջվեցայ, որքան ցաւեր կրեցի սիրելի երեխանս պատճառով: Բայց դարձեալ պետք է աշխատեմ ուրախ ձևանալ դէմքը դուռնաթափ պահել, աչքերիս հրատարիչ արտայայտութիւն տալ և յամալայից ժպտալ, ծիծաղել... որովհետեւ իմ սէրը, իմ իշխանը բարեհաճել է այս գիշեր իմ տխուր օթեանին այցելութիւն գործել...: Այ՛, ես տխրելու իրաւունք չունեմ... որովհետեւ իմ սիրտը ինձ չէ պատկանում... ես պիտի նրա մէջ խնդրեմ իմ բոլոր զգացումները, իմ բոլոր կրեքեր... և պիտի կեղծեմ... միայն թէ կարողանամ իմ տխրոյն հանց կրեմալ... որ չը ձանձարացնեմ նրա ուրախութեան քաղկները...:—Գիտես, փարիշան, այդ ինչ տանջանք է... դիտես, որքան հոգեկան մեծ գոհարեւութիւն հարկաւոր է դրա համար...

—Գիտեմ... սասց խելացի աղբիւնը:—Ամբողջ հինգ տարի է, որ ես ծառայում եմ ձեզ մօտ. ես միշտ նկատել եմ ձեր տխուր ժպտը, միայն արտասուքի կաթիլների միջից, ինչպէս անձրեային կաթիլների միջից թէլեւ անցնում են արեգակի ճառագայիթները, բայց լուս չեն ջերմացնում...

—Այ՛, հինգ տարի է, կրկնեց տիկինը.—բայց իմ այստեղ լինելու Եօթն տարի է: Այդ Եօթն

տարի ընթացքում իմ վիճակը եղել է մի սզոյմնելի վարձկան կնոջ դրութիւն, որ իր սերը վաճառում է... Նա կամայակամայ պետք է զուարճացնէ իր այցելուին, որովհետեւ դրա համար վարձված է. նրան վճարում են...

—Փարիշան, առաջ տարաւ նա.—գու որ և իցէ ժամանակ սիրել ես:—Սիրել եմ, տիկին:—Ուրեմն կարող ես երեսակայել, թէ որքան ծանր, որքան անախտոր թան է, երբ մարդ ակամայ ստիպված է սիրող ձեռնալ մէկին, երբ նրան սիրել կարող չէ:—Փորձել ես մի այսպիսի բան:—Փորձել եմ, տիկին...

Աղբիւնը մտաբերեց իր նոյն գիշերվայ ծանր փորձը դուռնաթափների գլխաւոր Աւար ամիտի հետ:

Չուքէլիյա խանումը ազգով յոյն էր, մի լաւ ընտանիքից. նրան խանը գերի բերեց Էրզրումի կողմերից, երբ Եօթն տարի առաջ իր աւագապային խումբերով գնացել էր այն կողմերում ասպատակութիւններ անելու: Նրա հայրը խոտացաւ հինգ հազար ոսկի տալ խանին, միայն թէ իր աղջիկը ազատեւ գերութիւնից, բայց խանը չընդունեց: Գեղեցիկ Չուքէլիյան մնաց նրա կանանցում, բայց ընտ փոխել չը կարողացաւ այն դաստիարակութիւնը, որ ստացել էր իր ծնողների բարեկրթ ընտանիքում: Խանի հարեմը լիքն էր ամեն ազգի, ամեն կրօնի կնիկներով. բայց նրանց և ոչ մէկին անքան անտանելի չէր հարեմական կեանքի սարկութիւնը, որպէս զգայուն, անկեղծ Չուքէլիյային:

Բայց արդեօք համալսարանականների թըրչնամական արամադրութիւնը դէպի մեր թերթը փոխվեց մեր գործունէութեան տաս տարվայ ընթացքում: Այն նա նոյն է մնացել բարձր ուսում ստացածներից մեր այժմեան 1300 բաժանորդների թւում հասկումի 25 հոգի կը գտնուէր: Իսկ մեր բաժանորդների մեծամասնութիւնը կազմում է ժողովուրդը, ժողովրդի գրագէտ մասը, ազգի միջին դասակարգը, ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, քահանայներ, վարժուհիներ, փոքրիկ պաշտօնականներ, միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գիւղական տանուտէրեր, արուեստագործներ: Բայց սորանց մեր բաժանորդների թւում կան և հայ-լուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ և հայ-բողոքականներ:

Մեզ պահպանում է, ուրեմն, հայ ժողովրդի միջին գրագէտ դասակարգը և հետզհետեւ «Մշակը» սկսում է աւելի և աւելի բաժանորդներ և կարգացողներ ստանալ և ժողովրդի ստորին դասակարգի մէջ արուեստագործներ, բանտերների, գիւղացիների և մինչև անգամ քաղաքի մշակների մէջ:

Մի՞տախոսե՞լ կը լինէր, ի հարկէ, համեմատել «Մշակի» գրութիւնը մի որ և է ուսում կամ օտարազգի լրագրի հետ, որոնք շատ անգամ ունեն քսան հազար, քսանասուն հազար, յիսուն հազար, հարիւր հազար բաժանորդներ: Բայց համեմատելով «Մշակ» լրագրի գրութիւնը մեր եղած և այժմ գոյություն ունեցող հայոց միւս պարբերական հրատարակութիւնների հետ, մենք կարող ենք վստահութեամբ նայել մեր թերթի գոյությունն ապագայի վրա:

«Մշակի» տաս տարվայ տարեգրքը մենք կարող ենք տեսնել այն հաստատ համոզմունքով, որ մեր թերթը այլ ևս չի անհետանայ, որ նա կազմել է իր տաս տարվայ ծանր աշխատանքով մի հաստատ հիմք

իր գոյութեան համար, որ նա երբէք ոչ որից օգնութիւն չենդրան չը լինելով, այժմ էլ ոչ որի օգնութեան կարօտ չէ, քանի որ նրա կողմն է հայոց ժողովրդի ամբողջ գրագէտ մասի, միջին դասակարգի համակրութիւնը: Մեր թերթի տաս տարվայ տարեգրքին հասած մենք կարող ենք բարձրաձայն ասել հայ հասարակութեանը, տաս տարվայ ընթացքում մենք միմեանց հասկացանք և, քանի կերթայ, մեր խօսքը մեր միջին դասակարգից աւելի և աւելի խոր կերպով կը թափանցի ամբողջ մեծամասնութեան մէջ և մենք ու ժողովուրդը, քանի կերթայ, միմեանց աւելի և աւելի կը հասկանանք:

Բարձր շքանշանների, համալսարանականների, հարստացած բուրժուանների, հայութեանց օտարացածների, հայութիւնը արհամարհողների, մայրենի լեզու ատողների, միմիայն իրանց շահի ետեկից ընկնողների, ժողովուրդը մոլորեցողների և նրան հարստահարողների հետ մենք գործ չունենք: Մեր ուղղութիւնը, մեր գործունէութեան եղանակը և գործելու շքանք արդէն նախազգծվեցաւ մեր լրագրի գոյութեան տաս տարվայ ընթացքում, մենք գործ ունենք հայոց ազգի միջին դասակարգի հետ որ յենուում է ուսումնասիրել մի միջին ամբողջի վրա, որի շքանքում, առանց կրօնի խորութեան, հետզհետեւ կաճն մեր բաժանորդները, մեր կուսակիցները:

«Մշակի» ժողովրդի մէջ տարածվելը շնորհով, արուեստական բան չէ, այլ ընթանում է իր բնական կանօնաւոր ճանապարհով: Հայ ամբողջը, որից դուրս են գալիս «Մշակի» համակրողները, սկսել է արդէն հասկանալ և, քանի կերթայ, մանաւանդ եթէ նպատակն մեզ առողջ հանգամանքները, աւելի և աւելի կը հասկանայ որ մենք խօսում ենք նրա համար, գործում ենք նրա համար, սպրդում ենք նրա համար:

«Մշակը» իր գոյութեան տաս տարվայ

անպիտանութիւնը տարածվում է և կնոջ առաջատար վրա: Կնոջ է նա, որ հարեմի մէջ սէր, երջանկութիւն և բանաստեղծական գուարճութիւններ է տեսնում...

Փարիզային շատ հաճելի էր լսել իր տիկնոջ դուռն բացը: Ամբողջ հինգ տարի նա կատարել էր մի անբաղդ դատաւորի պաշտօն, միշտ լսել էր նրա գանգատները, միշտ տեսել էր նրա աչքերի արտաստեղծ բայց ոչինչով չէր կարողացել բուժել նրա վերաբերման սիրտը կամ դարման գնել նրա ցտակերին: Իսկ այդ գիշեր փոքր էր մնում, որ նա բաց անէր իր ծածկամտութեան փականքը և ուրախալի խօսքերով ասեալէր նրա փրկութիւնը, ասելով.— Ես աղբիւր տիկին, մի քանի ժամ ևս համարելով իմ ունեցիլը, և դու իմ ձեռքով ազատված կը լինես... Բայց նա շատայց այդ խօսքերը, թողեց նրան անգիտութեան մէջ, — չտեսցաւ, թէ ինչ էր կատարվում նրա չորս կողմում, և ինքը ինչ սարսափելի դեր պիտի կատարէր ընդհանուր սազանապի բուպէում, երբ սուրն ու հուրը պիտի մար տարածէին ամեն տեղ... Նա միայն շտապեցրեց իր տիկնոջը, որ շուտով պատրաստվի, որովհետև խանի նրա մօտ գալու ժամը մօտնաւում էր:

Նա միայն միտիտարեց վշտացած տիկնոջը, ասելով.

— Շուք մի անկր, տիրուհի, Աստուած ողորմած է, ձմեռվայ դաճանաւնչ օրերից յետոյ գալիս են գարնան կենսաբեր օրերը. գիշերվայ խաւարին յաջորդում է առաւօտան պայծառ արշալոյսը: Մարդու կենսի մէջ էլ այսպէս օրերի և երանակների փոփոխութիւններ են լինում. լաւը յաջորդում է վատին, լոյսը յաջորդում է խաւարին...

Փարիզանք քահանայի աղջիկ էր. նա թէև կարող չէր իմանում, բայց բաւական զարգացած էր. հօր տան գաւառահարկութիւնից նա պահել էր շատ բան, շատ լուսաւոր հայացքներ կենսի ու նրա պայծառների վրա: Երբեմն հայոց աղբիկները գանազան Մանգօների, Ալպազանների, Արզունների, Բաթունների և ժողովական այլ թագաւորների կանանցներում առաքելութիւնների որբազան պաշտօն էին կատարում, իրանց գեղեցկութեան և սիրոյ հետ մտցնում էին քրիստոնէութիւնը կապաշտութեան պաշտօններում: Բայց մահմադական թաւար մոլորեցողները, նրանք այնուհետև մեծ գործերով կատարում էին իրանց պաշտօնը: Միայն Միայն հարկաւոր էր նրանց անհայտ և անհայտ փոքր և միջին դասակարգի միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գիւղական տանուտէրեր, արուեստագործներ: Բայց սորանց մեր բաժանորդների թւում կան և հայ-լուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ և հայ-բողոքականներ:

Արքայի կանանցներում առաքելութիւնների որբազան պաշտօն էին կատարում, իրանց գեղեցկութեան և սիրոյ հետ մտցնում էին քրիստոնէութիւնը կապաշտութեան պաշտօններում: Բայց մահմադական թաւար մոլորեցողները, նրանք այնուհետև մեծ գործերով կատարում էին իրանց պաշտօնը: Միայն Միայն հարկաւոր էր նրանց անհայտ և անհայտ փոքր և միջին դասակարգի միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գիւղական տանուտէրեր, արուեստագործներ: Բայց սորանց մեր բաժանորդների թւում կան և հայ-լուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ և հայ-բողոքականներ:

Արքայի կանանցներում առաքելութիւնների որբազան պաշտօն էին կատարում, իրանց գեղեցկութեան և սիրոյ հետ մտցնում էին քրիստոնէութիւնը կապաշտութեան պաշտօններում: Բայց մահմադական թաւար մոլորեցողները, նրանք այնուհետև մեծ գործերով կատարում էին իրանց պաշտօնը: Միայն Միայն հարկաւոր էր նրանց անհայտ և անհայտ փոքր և միջին դասակարգի միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գիւղական տանուտէրեր, արուեստագործներ: Բայց սորանց մեր բաժանորդների թւում կան և հայ-լուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ և հայ-բողոքականներ:

— Ես ոչինչ չեմ յիշում, պատասխանեց տիկինը տխուր ձայնով:

Արքային մտաբերած այն ժամանակը վեց ամիս առաջ էր, այնուհետև խանը ոչ մի անգամ չէր մտել Ջուբէլի խանութի բնակարանը: Այս գիշեր միայն հերթը նրան էր հասել... Այս գիշեր միայն ներքինապետը, այն ևս շատ ուշ, նրան իմացում տուեց հարեմի իշխանի այցելութեան մասին:

— Դէ շուտ արն, երկար մի տանջիր ինձ, ասաց տիկինը, ձանձրանալով արքային հարած չափազանց պաճուճանքերով:

— Իսկոյն, իսկոյն կը վերջանան, պատասխանեց արքայինը: — Մնում է ձեր յօնքերին:

տարեգրքին հասած, կարծում ենք, որ արդէն կատարեալ իրաւունք ունի իրան անուանել աղղային և ժողովրդական թերթ: Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՍԵՕՆՆԵՐ

Պետական և հասարակական հիմնարկութիւնների, տան տէրերի, հիւրանոցների տէրերի, քարվասարանների համար և այլն, որոնց հիման վրա նրանք պէտք է պահեն սնային մատենաներ և հասցէների թերթիկներ:

§ 1 Իւրաքանչիւր տանտէր, մասնաւոր, հասարակական, պետական կամ եկեղեցական աների կառավարչ կամ վերակացու, նոյնպէս և հիւրանոցների, իջևանների կահաւորված սենականների, կայարանների, քարվասարանների և գուկանների պահպանող պարտաւորվում են որոշված ձևով պահել սնային մատենաներ և արձանագրել նրանցում տան մէջ մշտապէս, կամ ժամանակաւորապէս սարող բոլոր անձանց, առանց բացառութեան: Բայց այդ վերոյիշեալ անձինք պարտաւոր են տան մէջ կացողների ամեն տեսակ փոփոխութեան մասին, որ պատահել է գանազան պատճառներից, յայտնի բնականների վրա տեղեկութիւն գրել և ուղարկել իրանց պիտիտական բաժնը 12 ժամվայ ընթացքում:

Ն կ ա տ. Այն աների մէջ, որտեղ կան հիւրանոցներ, քարվասարաններ, կայարաններ, կահաւորված սենականներ և այլն այդպիսի հիմնարկութիւնների տէրերը սուրբաթից իրանց սնային XIV բաժնի 343 յօդուածի հիման վրա ընդհանուր կանօնների համեմատ տեղեկութիւն են տալիս եկողների և նրանց սենականների մէջ բնակվողների մասին, նոյնպէս և գնացողների մասին:

§ 2 Պիտիտայից նշանակված օրը տանտէրերը և կառավարիչները պէտք է արձանագրեն սնային մատենանում տան մէջ ապրող բոլոր անձանց առանց բացառութեան թէ արական և թէ իգական սեռի, ինչ հասակի և կոչման էլ լինեն նրանք, պիտիտայից նշանակված յայտնի օրը, առաւօտեան մինչև 8 ժամը:

§ 3 Համեմատ 2 յօդուածի սնային գրքի մէջ պէտք է արձանագրվեն ա) տան տէրերը, նրանց ընտանիքը և ծառաները, բ) տան մէջ բնակվողները, նրանց ընտանիքը և ծառաները, գ) թիֆլիս եկողները և կամ տան տէրերի մօտ կամ տան մէջ բնակվողների մօտ մնացողները և եկողների ծառաները:

Ն կ ա տ. Եկողները պէտք է արձանագրվեն սնային գրքի մէջ մինչև անգամ այն դէպքում, եթէ նրանք նոյն օրը թողնեն թիֆլիսը:

§ 4 Թիֆլիսի բոլոր բնակիչներին յայտնի օրը որոշված գրքի մէջ արձանագրելուց յետոյ տան տէրերը, կառավարիչները և վերակացուները 12 ժամվայ ընթացքում պարտաւոր են արտագրել գրքից առանձին հասցէների թերթերի վրա երկու օրինակ և ուղարկել իրանց պիտիտական բաժնը:

§ 5. Երբ տանտէրերը, կառավարիչները, վերակացուները և այլն կը կատարեն վերոյիշեալ կանօնները, այնուհետև իւրաքանչիւր փոփոխութեան մասին, որ կը պատահի տան բնակիչների մէջ մահուան, տան կենդի տեղափոխութեան, ծառային արձակելու, մի նոր եկողի կամ գնացողի պատճառով գրքի մէջ հարկաւոր նշան անելուց յետոյ իրանց պիտիտական բաժնին ուղարկում են 2 օրինակ հասցէի թերթեր 12 ժամվայ ընթացքում կատարված փոփոխութիւնից յետոյ:

§ 6. Եթէ տան տէրերը, կառավարիչները կամ վերակացուները չը գիտեն ուստաց լե-

բասում *) դնել, աչքերին սուրմա *) քաշել, հագցնել ձեզ, և դուք բոլորովին պատրաստ կը լինէք: Նա սկսեց փետուրը թաթախել ինչ որ հեղուկի մէջ և նրանով վարդապետեալ ներկել տիկնոջ յօսքերը, որ առանց դրան ևս սե գոյն ունէին: Միայն հարկաւոր էր նրանց արդի ձև սալ, ծայրեր փոքր ինչ երկարացնել, իսկ մէջ տեղում յօնքերի երկու կամարները միմեանց հետ միացնել:

Այդ գործողութիւնը կատարելու միջոցին յանկարծ գտնել եղաւ թիղանթիւնի բոլորները: Ամբողջ ամբողջ սարսափելով դրոշաց: Սուկաց և տիկնոջ: Սուկուտից նրա գլուխը դողողաց, և փետուրայ վրձնը շեղվելով իր ուղղութիւնից, ձգեց նրա մարմարի մի մասն սպիտակ ձակատի վրա մի անկանոն սև գիծ:

— Դ՛՛՛՛, հոգիս դուրս գար, այդ ինչ եղաւ, գրչեց արքայինը ինքն և ստակալով, երբ նկատեց, որ իր բոլոր յայտնուածիւնները տիկնոջ յօնքերը գեղեցկացնելու վերաբերութեամբ ապագիւն եղան: — Բայց ես մեղաւոր չեմ, տիկին, եթէ դուք թիղանթիւնի ձայնից չը վախենայիք և ձեր գլուխը ուղիղ պահելը, իմ ձեռքը երբէք չէր սրտալի: Վնաս չունի. ես իսկոյն կը սրբեմ այդ անկանոն գիծը. նրա հետքն անգամ չի մնայ: Բայց դուք աշխատեցէ՛ք չը վախենալ և ձեր գլուխը չը դողողացնել, երբ միւս անգամ կը լսէք թիղանթիւնի որոտը:

— Ես կաշխատեմ... պատասխանեց տիկինը վշտալի ձայնով: — Ես որտեղ ու կայծակից անգամ ստակալու իրաւունք չունեմ, երբ ինձ զարդարում են իմ իշխանի գուարճութեան համար: Ես զգացմունքից զուրկ մի առաջակայ եմ: Աշխարհի կործանման բուպէում անգամ, երբ իմ տէրը ցանկանում է ինձանով ուրախանալ, ես պիտի խեղդեմ իմ սրտում իմ բոլոր զարհուրանքը և պիտի պատրաստվեմ նրան ուրախացնելու... Այդ

*) Բ ա ս մ ա մ մի օճանակի է, որով սև գուճով ներկում են յօնքերը: *) Ս ու ը մ ա մ մի սև փոշի է, որ գործ են ածում աչքերի համար: (Կը շարունակվի)

պէս է մեր վիճակը, Փարիզան: Նայիր, այնտեղ, մեղանոց փոքր ինչ հեռու, արիւն և արտասուք է հոտում: Մարիբը գրկած իրանց գաւառներին, աղաւթ ևս, որ իրանց սպանն և ինչայն որ դուռ: Այնտեղ թշնամու սուրբ մար է տարածում, իսկ այստեղ ինչ է կատարվում...

— Այստեղ բոնակալի դազանային կրքերի համար մի դո՛՛ է պատրաստվում... պատասխանեց արքայինը, չը կարողանալով գալու իր բարկութիւնը:

Արքայինը ջրով թրջեց մի սպիտակ շորի կտոր և զգուշութեամբ սկսեց սրբել անկանոն սև գիծը նրա ձակատից: Զօնքերի ներկելը աւարտվեցաւ, մնում էին աչքերը:

Նա փողոկեայ բարակ գեղտիլը թաթախեց մի փոքրիկ պարկի մէջ, որ շինված էր հաւի ոտքի կաշուց: Կրա մէջ անձ էր սուրմայի սև փոշին: Զետուր գեղտիլը վարդապետեալ տարաւ աչքերի երկու կողերի միջից: Այդ գործողութիւնից յետոյ կտպրել եղբորը ընդունում էին իրանց վրա սև փոշին, և աչքերին այնպիսի արտայայտութիւն էին տալիս, կարծես թէ, նրանք նշան սև չըբանակի մէջ գրված լինէին: Բայց արքայինը զարմացաւ, երբ նկատեց, որ այդ անգամ սուրման ամենակին չէր բոնակում: աչքերից բղթած հեղուկը ողորում էր, տանում էր սև փոշին: Տիկինը լաց էր լինում:

— Լաւ, լաւ, ասաց նա գեղտիլը մի կողմ դնելով, — ձեր աչքերը այնքան սև են, ձեր թերթերունքը այնքան խիտ են, որ սուրմայի կարտուծութիւն չունեն: Հիմայ մնում է ձեզ հագցնել: Այդ չապիլը պէտք է փոխէք. նա բաւական երկար է և թանձր: Խանը սիրում է կարճ և թափանցիկ չապիկներ, որոնց տակից մարմնի բոլոր գեղեցկութիւնները երևում են:

— Ես առում եմ այդ խայտառակութիւնը...

— Այդ ուրիշ բան է, որ դուք առում էք, բայց դուք պէտք է հագնէք այն, ինչ որ նրան է դիւր գալիս:

զուն, կարող են պահել տնային գրքերը հայերէն, վրացերէն կամ թուրքերէն լեզուով: Գրքերի մէջ արձանագրող տեղեկութիւնները, բաժինների և վերնագրիների համեմատ, պէտք է արձանագրվեն մաքուր, պարզ և որոշ:

§ 7. Տնային գրքերը մշտապէս կանոնաւոր և մաքուր պէտք է պահվեն:

Ն կ ա տ. Տնային գրքերը պէտք է ներկայացնել պոլիցիալաններին հէնց որ նարանք կը պահանջեն:

§ 8. Տան տէրերը, կառավարիչները, վերակառուցողները պէտք է ի նկատի ունենան հետևեալ կանոնները:

1) Ս պ ի տ ա կ թերթերը գործ են ամբողջ տեղեկութիւններ գրելու համար այն անձանց մասին, որոնք ապրում են թիֆլիսի մէջ, կամ տեղափոխվում են մի տանից միւս տուն մի և նոյն պոլիցիական բաժնի սահմանում:

2) Ա ա ա չ թերթերը գործ են ամբողջ տեղեկութիւններ գրելու այն անձանց մասին, որոնք դուրս են գնում թիֆլիսից, մտնում են հիւանդանոց, կալանաւորվում են կամ մեռնում են:

3) Բ ա ց-դ ե ղ ի ն թերթերը գործ են ամբողջ թիֆլիսում ապրող պահեստի զինւորների համար:

4) Մ ա է թերթերը գործ են ամբողջ տեղեկութիւններ մոցնելու համար հասարակաց կանանց և պոլիցիայի հսկողութեան տակ եղած անձանց մասին:

Ն կ ա տ. Բաց-դեղին և մուգ թերթերը գործ են ամբողջ միջոց, երբ հարկաւոր է տեղեկութիւն տալ այն անձանց մասին, որոնց համար նրանք որոշված են:

5) Խ բ ա ք ա ն չ ի ւ բ ր անձ, որ ապրում է թիֆլիսի մէջ, դուրս է գնում քաղաքից կամ վերադառնում է որ և է պատճառով, պէտք է արձանագրվի առանձին հասցեի թերթի վրա:

6) Ա մ ու ի ն կանայք, չը բացառելով և նրանց, որոնք ապրում են իրանց ամուսնիների հետ, արձանագրվում են ամուսնիներից առանձին թերթերի մէջ: Իսկ նրանց մօտ եղած անչափահաս երեխաները արձանագրվում են իրանց մայրերի թերթերի մէջ:

7) Հասցեի թերթերի մէջ չեն արձանագրվում առանձնապէս ա) բոլոր անչափահասները, որոնք ծնողների կամ այլ ազգականների հետ են ապրում, բ) բոլոր ուսումնարանների աշակերտները, որոնք նոյն իսկ ուսումնարանների մէջ են բնակվում, գ) զօրաբաժինների մէջ ծառայող զինուորականները, դ) եպիսկոպոսների կամ վանքերի երգեցիկները և ծառայողները, ե) նրանք, որոնք ժամանակաւորապէս գալիս են մի բան ծախելու և սպրանքը չը վաճառելու պատճառով գերեզմաններ քաղաքի մէջ:

8) Հասցեի թերթերը պէտք է գրված լինեն մեծ տառերով և պարզ և պէտք է պատասխանեն նրանց մէջ գրված բոլոր հարցերին:

9) Հասցեի թերթերը ուղարկվում են պոլիցիա առանձին ցուցակների հետ, որոնց մէջ նշանակված են փողոցի անունը, տան համարը, տանտիրոջ անունը, ազգը, կոչումը և աստիճանը և իւրաքանչիւր գոյնի թերթերի թիւը: Այդ ցուցակը պէտք է ստորագրված լինի ուղարկող անձից, նոյնպէս պէտք է նշանակված լինեն թրակները, ամիսը և ամսաթիւը:

(Ար շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Գեղեցիների 20-ին

Անցեալ նոյեմբեր ամսի 15-ին, զանաակի երկուսուկուսները համար, քաղաքի պատգամաւորներից ընտրված հոգաբարձուները— Միք. Լազարեանց, Նիկ. Մելիքեանց, Մկրտ. Արամաստեանց և Իվ. Գաբրիելեանց, կանդիդատներ ճանաչելի Մ. Ծանաղարեանց և Աղէք. Իսահակեանց, հաստատվեցին մեծ թեմ. վերատեսչից: Ծնորձաւորելով նորերին իրենց նոր պաշտօնով, կը յուսանք, որ ինչ հոգաբարձուներ իրենց մօտի ճաշիւնները նուրբին յաճեալաց յետոյ, հայ հասարակութեան հետաքրքրութեանը բաւականութիւն տալով կը հրատարակեն մեր հայ պարբերական թերթի միջոցով իրենց չորս ամսայ չըջանի ուսումնարանի անտեսական մանրամասը հաշիւը: Մեզ չափազանց զարմացրեց պատգամաւորների անտարբերութիւնը դեպի իրենց յանձն առած գործը, որ հոգաբարձու ընտրելին մի այնպիսի անձն, որը իր փաստարանութեամբ կամեցում է այն եկեղեցուց օտարացնել սեպական հոգը, որի կառավարողները արդիւնաբեր իր գոյութիւնը պահպանում է այն դպրոցը, որի վրա պարտնք հոգաբարձու է ընտրվել: Խօսքս Արարիկի վրա է. դուք մեր պատգամաւորները դիտութեամբ ընտրելով նորան, կամեցել են բարոյապէս պարտաւորել նորան յետ դատնալ ճանապարհից: Բայց նորս սխալվում են այդպէս կարծելով. առել լա է թող մեր հոգ. իշխանութիւնը ուղարկութիւն դարձնելով իմ համատարբերութիւն դարձնելով վարձատրի մի և նոյն մեզ ամենիս յայտնի պարտնք 500 ռուբլով. յուսալի է, որ այնուհետև գործը խաղաղութեամբ վերջանայ:

Մեր քաղաքային դպրոցի (եթէ միայն կարելի է այսպէս անուանել) հայոց լիզուր և կրօնի ուսուցիչ Ա. քահանան թողցել իր պաշտօնները, նորան փոխարինեց մի ուրիշը: Ըշտութեամբ կատարվեց մեր գլխին ժողովրդական առածը. «անձրեկից աղտուկեցրել, կարկոտի հանդիպեցանք»: Գանձակցել թող գոնէ այժմ մտածեն թէ իրենց որբուց կրթութիւնը ինչպիսի ուսուցիչ է յանձնված:

Ասում են, որ մեր քաղաքի հողեր երկուսուկուսներում աշակերտներին ծեծելը դարձեալ չարունակվում է. եթէ իբրեւ է, լա կանէին մեր պատուելի ուսուցիչները եթէ թողնէին այդ ինչ խալիֆայական մեթօդը և հետեւին այժմեան մանկավարժական թիւրմ մտքերին:

Պ. Իսախանի «Կալիթ-բեկ» պատմական վեպի սպառնական շարունակվելը «Մշակի» մէջ չափազանց մեղ ուրախացրել է: Արքան շատ է մեր ուրախութիւնը յիշեալ վեպի սպառնական մասին, այնքան ցաւ է մեզ համար, որ մեր լրագիրների համարները միշտ դողաւում են ճիւղ լրագիր կարգադրողները: Պէտք է իմանաք թէ ինչպէս են «Մշակի» համարները մէկ մէկի ձեռքից խլում և հետաքրքրութեամբ կարդում և թէ ամեն մի կարդացողի կողքին զանի մարդ կանոնաւորում են, այն էլ զանաակի փողոցներում: Թող պ. Իսախանի ընդունէ մեր ամենաջերմ շնորհակալութիւնը իր աշխատութեանց համար:

Շ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Վաղը, շարաթ օր, դեկտեմբերի 26-ին «Մշակի» համարը չենք հրատարակի, որովհետև այսօր ուսուցիչ Գնուշը լինելով, սպառանի բանտից, մանտանող սպառնելով, որոնցից շատերը վրացի են, չեն բանտ: «Մշակի» հետեւեալ և այս տարվայ վերջին համարները կը հրատարակենք երեք շարթի, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը, այսինքն դեկտեմբերի 29-ին, 30-ին և 31-ին:

Ստացանք ԲԱՊՈՒԻՑ պ. Մինաս Գասարեանցից 8 ռուբլ բաժանորդագին «Ժողովուրդի Սրբինի» համար: Նախկին փողի հետ կանի 559 ռուբլ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են որ դեկտեմբերի 20-ին կատարվեցաւ զանաակիցի հանդուցեալ Վիւրար Մկրտաւանցի թղթաւոր ժառանգ չունելով, հանգուցեալը, ասում են, կտակել է մի բարեգործական նպատակի համար 400 ռուբլ:

Ներկայ 1881 թ-ին «Մշակի» բաժանորդների թիւը հասաւ մինչև 1,300 հոգի:

«Кавказ» լրագիրը լսում է որ եկող 1882 թ-ից սկսած գիտաւորութիւն կայ հրատարակել

թիֆլիսում մի գերմանական լրագիր «Tifliser Zeitung» վերնագրով, պ. Ստալի խմբագրութեամբ:

«Кавказ» լրագրում կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Թիֆլիսի քաղաքային Գումայի մէջ ընդունեալ դեկտեմբերի 21-ին հասցեների գրասենեակի գործը: Չայնաւորներից ոմանք յայտնեցին որ մինչև յունվարի 1-ը եկող 1882 թ-ի անհարկն կը լինի մոցնել այն կանոնները, որոնք հրատարակվեցան «Кавказ» լրագրում, որովհետև մինչև այդ ժամանակ տանտերի մեծ մասը տեղեկութիւն էլ չեն ունենայ նոր կարգադրութիւն ստանալ: Վիճարանութիւններից յետոյ Գուման համաձայնվեց ճայնի թաղմութեամբ Ռաբրովայի հետեւեալ սուաչարութեան հետ: «Ռաբրովայի գրասենեակ թէ հասցեների գրասենեակի մոցնելը, հրատարակված կանոնների հիման վրա, նկարագուցիլ է քաղաքի ազգաբնակչութեան մեծամասնութեան համար, առաջարկում է Գումային թոյլ տալ իրան խնդրել յետաձգել այդ նոր կանոնների մոցնելը և յանձնել քաղաքային Գումային ընտրութեամբ երկարել յիշեալ կանոնները, եթէ Գուման հարկաւոր կը համարի մոցնել նրանց թիֆլիսում, փոխարինելով այդ կանոնները համեմատ տեղական պահանջներին»: Ռաբրովայի անդամ Թամաշեվ յայտնեց որ պոլիցիական վարչութիւնը ծախսեց անային մաստանների և թերթիների պատրաստելու վրա չորս թէ ինչ հազար ռուբլ, բայց տան տերերին նրանց ծախսուց կը տանայ արդիւնք 60,000 ռուբլ: Ռեբին տեղացրեց նա, դա չէ լինի մի միայն կատարված ծախսի վերադարձնելը, այլ մի նոր հարկ որ կը դրվէ քաղաքային ազգաբնակչութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը, երբ նորից կը սկսի աշխատել, կը զբաղվի զինուորական վերանորոգութիւնների հարցով: Քննութեան առաջին առարկաները կը լինեն զինուորների հաւաքելու եղանակը և զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը որոշելը: «République Française» լրագիրը նկատում է, որ այդ հարցը չափազանց նշանաւոր է և գովում է պատերազմական միջոցներին, որ նա որոշեց այդ հարցը անյայտագ կենթարկել բազմակողմանի մըշակմանը: Լրագիրը հաստատ հաւատացած է, որ պատգամաւորների ժողովի հանրապետական մեծամասնութիւնը կատարելապէս համակրում է կառավարչական նախագծերին զօրքերի վերակազմութեան վերաբերութեամբ և պատրաստ է օգնել կառավարութեանը ժողովրդական պաշտպանութեան միջոցները հարստացնելու և ընդարձակելու համար:

Նորբումն աւստրիական դեսպան կոմս Բէյտ յանձնեց Գամբետտային աւստրո-ուկրաբական արտաքին գործերի նոր մինիստր կոմս Կարլօկի առաջին զիլլոմստիական շրջաբերակները: Ասում են, որ սպանիական դեսպանը Ֆրանսիական կառավարութեան մօտ ուղևորվել է իր հայրենիքը և շուտ չի վերադառնայ ֆարիզ: Կրա պատճառը այն դժուարութիւններն են, որոնք ծագել են Ֆրանսիական և սպանիական կառավարութեան մէջ Սայիդի մէջ վեհապետ սպանիացիներին վարձատրելու վերաբերութեամբ: Արտաքին գործերի նախկին մինիստր Բարտեկմի Սենտ-Կլեր խոստացել էր սպանիական դեսպանին վարձատրել ապստամբութեան պատճառով նրա վեհապետ հայրենակիցներին, բայց երբ կառավարութիւնը անցաւ Գամբետտայի ձեռքը, նա յայտնեց, որ չէ կարող կատարել իր նախորդի խոստումը: Ֆրանսիական մինիստրի հիմնած «Union Republicaine» լրագիրը մի օրուած տպեց Բորայի և Ֆինանսական աշխարհի նշանաւոր անձանց անչափ պահանջները:

ների դէմ: Յօդուածի մէջ ստված է, որ Բորայն միշտ թշնամաբար է վերաբերվել հանրապետութեանը, բայց վերջինը պէտք է յաղթէ ֆինանսական աշխարհի ընդդիմադրութիւնը տնտեսական և սօցիալական խընդիրները լուծելու ժամանակ: Նրկի դրամի և հաւատարմութեան օգնութեամբ, որ ֆինանսիստներից աւելի հարուստ և զօրեղ է, հանրապետական կառավարութիւնը առանց մեծ դժուարութեան կազատէ պետական կրեդիտը նշանաւոր առևտրական ընկերութիւններին երկարիկութեց, իսկ երկրի արտտեսական շահերը և տարիֆները ակցիոնների մեծ ընկերութիւնների կամայակաւորութեանց: Ինչպէս երևում է ֆինանսների մինիստր Ալլեն Տարփէ կամեցում է հարուածել ոչ թէ միայն Բորային գործիչներին, այլ և Լէօն Սէի նման նրանց երեւելի կողմնակիցներին:

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ եղած վերջին ընդունելութեան ժամանակ Գամբետտա ի միջի այլոց նկատեց, որ նա ընդունեց արտաքին գործերի մինիստրութիւնը զլիսաւորապէս աւստրիական դեսպան կոմս Բէյտի խորհուրդների սպառնութեան տակ, որ աւելացրեց հեղուկութեամբ Գամբետտա, պէտք է այդ որոշման հետեւանքների համար բաժանէ բարոյական պատասխանատուութիւնը: Գամբետտա առ այժմ բաւական չէ իր մինիստրութեան գործերի ընթացքով: Փորձված դեսպանները հեռացրած են իրանց պաշտօնները, իսկ նրանց տեղ նորերի նշանակելը դժուարութիւնների հանդիպեց և երկար ժամանակ աւեց և այդպիսով Ֆրանսիական արտաքին քաղաքականութիւնը անորոշ կերպարանք ստացաւ: Գամբետտայի կողմնակիցներին սաստիկ զայրացնում է մամուլի վարմունքը, որ անբաղար յարձակվում է կառավարութեան ընտրած նոր պաշտօնականներին վրա: «Journal des Débats» լրագիրը գանդատվում է այն վիրաւորական կարծիքների վըբա, որոնց յայտնեց մամուլը կոմս Ծօրօրիկ Ս. Պետերբուրգ դեսպան նշանակելու առիթով: Այդ կասկածանքները դէպի հանրապետական կառավարութիւնը պաշտօնականներ ընտրելու գործի մէջ մանաւանդ անյարմար են այժմ, երբ նշանաւոր դիմօմաններ պէտք է նշանակվեն օտար կառավարութիւնների մօտ: Ֆրանսիայի ներկայացուցիչները դէմ ուղղած անինայ կրիտիկ թուլացնում է այդ ներկայացուցիչների ազդեցութիւնը և հեղինակութիւնը և այդպիսով վնասում է Ֆրանսիայի շահերին: «Journal des Debats» լրագիր կարծիքով մամուլը պէտք է զգուշ և ազգասէր լինի, երբ այդպիսի դատողութիւններ է անում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Վիենայի «Polit. Corresp.» լրագիրն Ֆրիլպօպօլից գրում են հետեւեալը. «Նոյեմբերի 26-ին, ուսուցիչ Կայսրուհու ծննդեան օրը, բոլորական եկեղեցում հանդիսաւոր մաղթանք կատարվեցաւ: Մէկ օր առաջ, ուսուցիչ Կայսրուհու նամակ գրեց պատգամաւորների ժողովի նախագահին, հրաւրելով պատգամաւորներին ներկայ գտնվել այդ հանդիսին: Բոլոր պատգամաւորները և քաղաքական ու զինուորական բոլոր աստիճանաւորները հաւաքվեցան եկեղեցում, ուր ուսուցիչ Կայսրուհու և նրա ամուսինը բռնեցին գործով ծածկված տեղը, որ նշանակված էր գնեբալ նահանգապետ Ալէքս-ֆաշայի համար: Վերջինը, նրանցից վերջը գայով և իր տեղը բռնված տեսնելով, բաւականացաւ նրանց ետև գտնվող մի ուրիշ տեղով: Մաղթանքը կատարելուց յետոյ, երբ քահանան սեզանից դուրս բերեց խաչը, և սովորաբար կամեցում էր ամենից առաջ գինեկալ-նահանգապետի մօտ տանել, ուսուցիչ Կայսրուհու առաջ ընկաւ և խաչը ստացինը համբարեց: Ալէքս ֆա-

շան ոչ մի խօսք չստաց և չը շնորհաւորելով հիւսաւորտան, իսկոյն տուն գնաց: Բուսաց հիւսաւորտան վարժանքը, որ մտադրութեամբ արված է համարվում, մեծ յուզումներ գարթեցրեց բարձրակարգ շրջաններում:

— Հռօմէական «Observatore Romano» քաղաքը դեկտեմբերի 13-ից հաղորդում է հետեւեալը: Երեկ պապը, ամենահին ժամանակներից մնացած սովորութեամբ, ընդունում էր կարդինալներին, որոնք եկել էին Վիտորիո և Նոր տարին պապին շնորհաւորելու համար: Որպէս պատասխան նրան արած բարեմակութիւններին, պապը հայր ասաց, որ նրա դրութիւնը շատ անսովոր է դառնում: Հռօմէական եկեղեցու գլխի անկախութիւնը և նրա հզօր իշխանութիւնը պապականութեան միակ միջոցն է վերականգնել աշխարհային իշխանութիւնը, որը տասը դարերից անէլի գոյութիւն ունէր: Այդ պատճառով շատ հասկանալի է, որ եպիսկոպոսներից նրանք, որոնք Հռօմում են գտնուում, հրաւիրւած ստացան իրանց կարծիքը յայտնել գործերի դրութեան մասին:

— Համարի ընկերութիւնը: հետեւեալ հետազոտող ստացու Կ. Պօլսից, դեկտեմբերի 14-ից: Լուր է տարածվել, թէ Բ. Կուրը դիտաւորութիւն ունի երեք միջխտութիւնների, — հասարակական աշխատանքների, աւետարի և ֆինանսների պարտֆէլները, առաջարկել երեք գերմանացիներին Վէտտենպօրֆ կընդունի ֆինանսների միջխտութիւնը: Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է նոյնպէս նահանգապետների մօտ մուսոնշարներ կամ խորհրդակցանքներ գերմանացիներին նշանակել: Ալի-Նիզամ-փաշան, ասում են, արդէն բանակցում է զանազան անձանց հետ թերլիսում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թերլինի «Tagblatt» քաղաքը պատմում է, որ իւրաքանչիւր օր տեղական կաթնամանուր կաթ է հասցնում բնակիչներին, ի միջի պլուց և Ս. կայրածից: Նորերումս առաւօտեան կաթ բերող կառապանը գալիս է իր մուշտարիների մօտ առանց կաթի և իրան արդարացնելու համար ասում է հետեւեալը. երեկ կէսօրին մեր հարկուրեց անէլի կովերը բարբը հարբեցին: Ահա թէ ինչպէս: Կովերի խմելու ամանների մէջ, սխալմամբ ըրի տեղ 150 լիտրի չափ սպիրտ են անել: Այդ հրեղն հեղուկը ինչպէս երևում է, կովերին դուր է եկել և կարճ ժամանակում նրանք այնպիսի դրութեան են հասել, որ ոչ մէկը չէ համարձակվել մօտեցնել նրանց, և այդպիսով նրանց չը կիթեցին: Կառապանը յայտնեց, որ երկի միայն այսօր երեկոյեան արբեցողները ուշքի կը գան:

Գանիել կայ պատմում է չինացի մէկ երեխայի զարմանալի ընդունակութեան մասին: Նորերումս մէկ ուսումնարանում ընտրութեանը ներկայ գտնուելով, նա տեսաւ, թէ ինչպէս մէկ երեխայ առանց կանգնելու ամբողջ Նոր-Կտակարանը անցկը ասեց:

Ամերիկայի Մասաչուզէտ նահանգում մի քանի ժամանակից մէկ քաղաքի է հրատարակվում, որը, ինչպէս ինքն խմբագրութիւնը հաղորդում է իր ստորագրական թէկլամի մէջ, կարող է ստորագրողներին ծառայել որպէս անուշահոտութիւն տարածող թուղթ: Նրա բովանդակութիւնը, հոտի հետ միասին, որ խմբագրում է այնչափ ժամանակ, անդարդ կը փոփոխվեն ամենախտորժեղի կերպով:

Կանադայի նահանգապետ Լորդ Լօրն նորերումս նախագահում էր Լոնդոնեան կանանց գաղթականութեան համար կազմված ընկերութեան միտինգին: Նա յայտնեց, որ կանադան, մասնաւոր նրա արևելեան մասը, խոստացեալ երկիր է անպատակ աղկանց համար: Այդ նահանգի քաղաքներում դժուար են աղակերպներ գտնում, բայց նորաբարձր պահանջ անէլի ևս մեծ է: Բաւական է, որ մէկ քիչ թէ շատ գեղեցիկ աղջիկ ասի իջնի, — մի քանի օրից յետոյ նա արդէն ամուսին կը գտնի: Հեռու արևելեան ծայրերում մինչև անգամ պատերազմում են նորահարսերի համար: Մօնրեալում, Կիլբերկում և Տօբոնտօում ամուսնիկները զանգարում են, որ չէ կարելի մի քիչ գեղեցիկ աղախին վարձել. երկու շաբաթից յետոյ յայտն:

վում է մէկ սիրահարված երիտասարդ, և աղախինը մարդու է գնում: Որովհետև, ստատիստիկական տեղեկութիւնների համեմատ, Անգլիայում կանայքը մէկ ամբողջ միլիոնով տղամարդերից անէլի են, այն ժամանակ, ի հարկէ, այդ անւցածը գաղթելով, երկու երկիրներին համար ևս օգտակար կը լինէր:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐ ՆԵՐ

ՄԻՋԱՋԳՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐՆՈՒՊՈԼԻՍ, 23 դեկտեմբերի: «Прав. Вѣстн.» լրագրի հաղորդութիւնը հեբբում է լուրերը պօլիցիական միջխտութեան կազմվելու մասին: Լրագրիները գեկտեմբերի 23-ից հաղորդում են, որ Բուսաստանի հարաւում մի ընկերութիւն է կազմակերպվում Քուլթայի իսահանգի քարածուխի հանքերի արդիւնաշահութեան համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐՈՒ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ Редакціи газеты «МШАКЪ»
Продается
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ ամենաէժան գներով կօնեակի վիսիկ, պորտվէյն, խերես, շամպայն, մուրաբաներ, սուսու, պիկուլի, բակ, սեմզա, կօնֆեկաններ, ապակու ամաններ, բրիտանական մետալից առարկաներ, սապօն, չուլիկ, գուլպաններ, հագուստներ, վարտիկներ, ֆուֆայկա, ալբոմներ: Պանիր չեստեր 80 կ. ֆունտը, արմատներ պլումբուգիլի համար 40 կ., արձաթէ մուր 35—42 կ. անգլիական ֆունտը, մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական երկաթէ մահճակալներ 30% էժան քան թէ մի ուրիշ տեղ, այսինքն երկխաների 4 բուբուց և մեծերի 12 բուբուց: 50,000 ֆունտ թէյ 1 բուբուց և ամենալար 2 բ. ֆունտը: Մայիսում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ:

3—7

Վ ա ճ ա ու զ ու ռ ի ն 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բ ա ժ ա կ ն ե ր 25 կ. հատը, 10,000 բ ո ս յ ա լ և բ ա ժ ա կ ն ե ր 10 կ. հատը, 10,000 մ ա տ ու ճ ա բ ա ղ ն ե ր և կ ո ղ պ է ք ն ե ր 15 կ. հատը, 10,000 ա ս ե ղ 8—40 կ. հատը, 10,000 պ ն ե ղ ն ե ր 5 կ., 5,000 շ ի շ պ ո ռ ա վ է յ ն և խ ե բ ե ս 1 բ. հատը, 2,000 արշին կ լ է ո ն կ ա 60 կ.—2 բ. արշինը, 2,000 դ ի ժ ի ն մ ա տ ի տ ն ե ր և զ ղ շ ա կ ը ի ր 8 կ. գ ի ժ ի ն ը, 2,000 ֆ. հ ն զ կ ա ղ ո ն բ ի ՚ ի Ն 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լ է պ է շ լ ա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բ է զ ո լ լ ի բ ն ե ր 4—34 բ. հատը, 300 անգլիական հ Ր ա ց ա ն ն ե ր 20—100 բ. հատը, գրասպ, ա թ ի կ ո, ա լ բ ո մ ն ե ր, ձ մ ե ո Վ յ ա ց պ լ ա ճ ն ե ր, գ լ խ ա Ր կ ն ե ր, վ ա ռ ի կ ն ե ր, հ ա դ ու ս ա կ է թ գ ն ո Վ : Ծ ա խ լ ու մ է Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Խ Ա Ն ՈՒԹԻ մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային ԽՈՏ պուրջ 2 բ. 50 կ.: 29—60

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԱԻԱՆՎՈՒԹԻՒՆՆԵՐԻ» առաջին հատորը (ա. զբոյցի), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. զբոյցի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մտնի նորաբ. զբոյցը: Իսկ երբ կը վերջանանք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական ավանդութեանց միտտեսակների հրատարակութեան—ԱՆՆԵՆՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱՄՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾԲՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս անելով նոյնպէս ասանձին զբոյցներով:

Թուով եմ, որ մեր պատուելի օտարաբարբառի համազգայնը չեն գլանայ իւրեանց կարեաց չափ անկից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր զբոյցները մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այս նոցա ազգ-անունները կը տպագրուեն զբոյցի վերջը: Իսկ այն պարունակը, որոնք այս ավանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողովածուն վաճառել թող բարեհաճն յայտնել իրանց պայմանները:

Ինչթերը հարկաւոր է գրել (զրաճը ինչպիսի մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. դնելով ժողովածուի վերջ տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. Тиграны Навасармянцъ. Տ. Նաւասարդեանց.

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթուներ և բազկաթուներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաբարբառից կարող են դիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.
122—150

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանք ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Կինը 2 բ. շիշը, ՓՈՍՏԱՆՅՈՎ ուղարկված 2 բ. 49 կօպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ
Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԻՂ, մազերը ամրացնող համար, 1 բ. անոնը վրձին գլխացակի դէմ, ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ և հոտակէտ ջրեր և այլն: 60—100

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ
Որոնք վաճառվում են ԶԱԲԱՐԻԱ ԳՐԻԳՐՆԱՅԻՆ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»
1 Բարատունի՝ Տանն պատգամը. գինն է 25 կ.
2 Աղայանի՝ Անահիտ, հին զրոյց. 50 "
3 Թղուկ, թարթ. Տէր-Միքայելեանցի. 30 "
4 Աղբատ մանուկ կամ բարոյական վէպ. 20 "
5 Խաթաբալա Սոււնդուկեանցի. 50 "
6 Չորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի. 20 "
7 Հայկերէն լոսո երկխաների համար. 50 "
8 Տէր-Աղբարեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն. 60 "
9 Կոստանեանց՝ Գրաբաւ բայերի խոնհարումը. 25 "
10 Թագուրեան՝ Փորձ լեզուագիտական հետազոտութեան. 50 "

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բաւալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրախմբատանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրատարակում էմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՕՄՄԻՍՅՈՎ: Իմ հասցէն. Դ. Յրиванъ, Персесу Симеонянцу, магазинъ «Другъ Дѣтей.» 9—10
Չ ա յ ի և գ ի ն ու ս տ ա ք ա ն ն ե ր
144 Արժրոնու գալերիա 144
ամենաէժան պահեստ
Թերլի և հայեկների: